***Կարգապահականգործթիվ ԿԳ-14164***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հուլիսի 15-ի թիվ 123-րդ ԿԳ նիստի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/80-Ա

## ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ),** Նախագահությամբ Խորհրդի անդամ՝ Կարապետ Աղաջանյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Տիգրան Խուրշուդյանի, Երվանդ Վարոսյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի, Նելլի Հարությունյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լուսինե Սերգեյի Սահակյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 428) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**,կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

### *Պ Ա Ր Զ Ե Ց՝*

1. **<u>Կարգապահականվարույթհարուցելուառիթըևհիմքերը.</u>**

Քաղաքացի Լալա Նավասարդյանը **(այսուհետ ՝ նաև Դիմող)** դիմել է Պալատ և հայտնել , որ Լուսինե Սահակյանը իր որդու նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում առանց իր և իր որդու գիտության և համաձայնության ստորագրել է մի շարք փաստաթղթեր՝ ներգրավվելով որպես իր որդու պաշտպան :

Դիմողը խնդրել է փաստաբանինկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

**<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը քննությանառնելով փաստաբան Լուսինե Սահակյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմումը 15.12.2014թ. թիվ 417-Ա/ԿԳ-

14164 որոշմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.1 և 3.1.9 կետերի պահանջի խախտման հատկանիշով:

**3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

**3.1. Դիմողի համառոտ բացատրությունը**.

Դիմողը 27.11.2014թ-ին գրավոր դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ,որով ըստ էության հայտնել է, որ փաստաբան Լուսինե Սահակյանը իր որդու նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում առանց իր և իր որդու գիտության և համաձայնության ստորագրել է մի շարք փաստաթղթեր՝ ներգրավվելով որպես իր որդու պաշտպան :

Դիմումին կից ներկայացվել է 02.05.2014թ-ի կազմված իր որդու ձերբակալման , կասկածյալի իրավունքները բացատրելու, կասկածյալի իրավունքները և պարտականությունները ծանոթացնելու և պաշտպանից հրաժարվելու մասին արձանագրությունների պատճենները :

Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմողը 22.12.2014թ-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ներկայացրել է դիմում և խնդրել քննության չենթարկել իր ընդդեմ Լուսինե Սահակյանի 27.11.2014թ-ի ներկայացված դիմումը:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում դիմողը բացատրություններ չի տվել և կարգապահական գործի քննությանը ՝ Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել :
15.07.2015թ-ին ստացվել է 14.07.2015թ-ին ՀՀ ԱՆ <ԳՈՐԻՍ > ՔԿ-ի կալանավոր Մուշեղ Արթուրի Մանուչարյանի դիմումը՝ հասցեագրված Փաստաբանների Պալատի խորհրդի նախագահին, որով նա ըստ էության հայտնել է, որ 2014թ-ի մայիսի 1-ին իրեն բերման են ենթարկել ոստիկանության Սիսիանի բաժին, որտեղ նա ցանկություն է հայտնել, որպեսզի հրավիրեն փաստաբան Լուսինե Սահակյանին: Հարազատների միջոցով փաստաբանը ներկայացել է, սակայն հետո Մ. Մանուչարյանը հրաժարվել է փաստաբանի ծառայություններից: Նա նշել է նաև, որ իր մայրը տեղյակ չի եղել այն մասին, որ իր ցանկությամբ է հրավիրվել

փաստաբան Լուսինե Սահակյանը և իր ցանկությամբ է հրաժարվել նրա ծառայություններից:
Մուշեղ Մանուչարյանը նշել է, որ Լուսինե Սահակյանի դեմ բողոք չունի և խնդրել է նրա նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել :

**3.2.*<u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>***

*-Պատասխանողը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում ներկայացրել է բացատրություն, որով ըստ էության հայտնել է, որ 2014թ-ի մայիսի 1-ին իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու կասկածանքով ոստիկանության Սիսիանի բաժին բերման է ենթարկվել Մուշեղ Մանուչարյանը: Նա ցանկություն է հայտնել պաշտպան ունենալ՝ նշելով իր անունը և հայտարարել որպեսզի ապահովեն նրան: Քանի որ արդեն ոչ աշխանտանքային ժամ էր պատասխանողը ամուսնու հետ է գնացել Սիսիանի ոստիկանության բաժին, որից հետո հանդիպել է Մուշեղ Մանուչարյանին, փորձել նրա հետ առանձին խոսել , ճշտել դեպքի մանրամասները և քննարկել հոնորարի չափը ու վճարման կարգը: Այնուհետև պատասխանողին անհասկանալի պատճառով Մուշեղ Մանուչարյանը հայտարարել է, որ չի ցանկանում պաշտպան ունենալ և հրաժարվել ստորագրել որևէ փաստաթղթի տակ: Պատասխանողը ստորագրել է իր ներկայությամբ կազմված՝ պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ արձանագրության տակ: Պատասխանողը նշել է, որ իր կողմից չեն խախտվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.1 և 3.1.9 կետերի պահանջները, քանի որոստիկանություն ներկայացել է ծերբակալվածի խնդրանքով:* Պալատի խորհրդի նիստին պատասխանողը չներկայացավ :

**3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**<u>4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>**

Կարգապահականգործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան՝ Անժելա Հոբուսյանին: Վերջինս հավաքագրելով տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրելով դրանք՝ 2015թ-իփետրվարի 05-ին կազմել է եզրակացություն, որի համաձայն նա գտել է, որ չի հաստատվել այն փաստը, որ քրեական գործով փաստաբան Լուսինե Սահակյանը մասնակցել է կասկածյալ Մուշեղ Մանուչարյանի հանձնարարությամբ :

Ներկայացված եզրակացության կապակցությամբ կողմերը որևէ դիրքորոշում չեն հայտնել:

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

2014թ-ի մայիսի 1-ին ներկայացել է ոստիկանության Սիսիանի բաժին՝ նույն օրը բերման ենթարկված Մուշեղ Մանուչարյանի ցանկությամբ և պահանջով և նրա շահերը պաշտպանելու նպատակով ,այնուհետև Մուշեղ Մանուչարյանը հայտարարել է, որ չի ցանկանում պաշտպան ունենալ, որը հաստատվում է, 14.07.2015թ-ի ՀՀ ԱՆ <ԳՈՐԻՍ > ՔԿ-ի կալանավոր Մուշեղ Արթուրի Մանուչարյանի դիմումով:

**6. Պատասխանող իանձը բնութագրող հանգամանքները.**

Պատասխանող Լուսինե Սերգեյի Սահակյանը փաստաբանի թիվ 428 արտոնագիրը ստացել է 28.06.2001թ.-ին: 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում, նրա նկատմամբ 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ 28.12.2006թ-ին,14.12.2007թ-ին 09.11.2010թ-ին , 27.12.2010թ-ին, 21.05.2013թ-ին և23.05.2014թ-ին հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար: Նշված բոլոր վարույթները Պալատի խորհրդի որոշումներով կարճվել են ՝ արտոնություն կիրառելու հիմքով :

**8.Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Խորհուրդն ուսումնասիրելով վերը թվարկված փաստաթղթերը և գնահատելով դրանք՝ փաստում է , որ փաստաբան Լուսինե Սահակյանը 2014թ-ի մայիսի 1-ին ներկայացել է ոստիկանության Սիսիանի բաժին՝ նույն օրը բերման ենթարկված Մուշեղ Մանուչարյանի ցանկությամբ և պահանջով և նրա շահերը պաշտպանելու նպատակով, այնուհետև Մուշեղ Մանուչարյանը հայտարարել է, որ չի ցանկանում պաշտպան ունենալ :

Խորհուրդը որոշում կայացնելիս հիմք է ընդունում 14.07.2015թ-ին ՀՀ ԱՆ <ԳՈՐԻՍ > ՔԿ-ի կալանավոր Մուշեղ Արթուրի Մանուչարյանի դիմումը, ըստ որի նա 2014թ-ի մայիսի 1-ին բերման է ենթարկվել ոստիկանության Սիսիանի բաժին, որտեղ նա ցանկություն է հայտնել, որ հրավիրեն փաստաբան Լուսինե Սահակյանին, հարազատների միջոցով փաստաբանը ներկայացել է, սակայն հետո նա հրաժարվել է փաստաբանի ծառայություններից: Ըստ Մ.Մանուչարյանի իր մայրը տեղյակ չի եղել այն մասին, որ իր ցանկությամբ է փաստաբան Լուսինե Սահակյանը հրավիրվել և իր ցանկությամբ է հրաժարվել նրա ծառայություններից: Մուշեղ Մանուչարյանը խնդրել է Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Խորհուրդը արձանագրում է նաև այն, որ Մ.Մանուչարյանի մայրը՝սույն կարգապահական գործով դիմողԼալա Նավասարդյանը, դեռևս 22.12.2014թ-ինՀՀ փաստաբանների պալատի նախագահի ներկայացրել է դիմում և խնդրել քննության չենթարկել ընդդեմ Լուսինե Սահակյանի 27.11.2014թ-ի ներկայացված դիմումը:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը հաստատված է համարում այն, որ փաստաբան Լուսինե Սահակյանը 2014թ-ի մայիսի 1-ին ներկայացել է ոստիկանության Սիսիանի բաժին Մուշեղ Մանուչարյանի ցանկությամբ և պահանջով :

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից թույլ չի տրվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.1 և 3.1.9 կետերի խախտում և նրա նկատմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որկարգապահական գործի քննության ընթացքում հիմնավորվեց, որ պատասխանողը քրեական գործով վարույթն իրականացնող մարմին ներկայացել է բերման ենթարկված անձի ցանկությամբ և պահանջով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին կետի համաձայն ՝Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Պալատի փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Պալատի խորհուրդը

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 15.12.2014թ. թիվ 417-Ա/ԿԳ-14164 որոշմամբ փաստաբան Լուսինե Սերգեյի Սահակյանի (արտոնագիրթիվ 428) նկատմամբ Կանոնագրքի 3.1.1 և 3.1.9 կետերի պահանջի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և Պատասխանողին:***

**<u>Ծանոթություն.</u>** Սույնորոշումըկարողէբողոքարկվելդատականկարգով՝ այնստանալուօրվանիցմեկամսյաժամկետում: Սույնորոշումնօրինականուժիմեջէմտնումսույնկետովնախատեսվածբողոքարկմանժամկետնանցնելուցհետո:

**Հայաստանի Հանրապետության**
**փաստաբանների պալատի**
**խորհրդի նիստը նախագահող՝** **Կարապետ Աղաջանյան**